են և սև, ամբողջական, կարճած մօրուքով և թաւ ընչացքով. ականջներից կախուած են ոսկէ օղեր, բոլորակով վերջացած. մատանեմատին մատանի:

Դրակալի մէջ կողմից ծունկ է չոքել Աղատիկինը, ձեռքերը դարձեալ աղօթաւոր մնկնած դէպի աւետարանը: Վերից վար հագել է մինչև ոտները հասնող սպիտակ շրջազգեստ, մակերևոյթը զարդարուած ոսկեզոյն բուսական զարդերով, որ շրջափակուած են ցօղուններից, սեղմած և զուգահեռաբար շարուած քառանկիւններով: Թևերին անցրած է թևնոց, որ սովորական էր Մեծ Հայքի կնգրոնական նահանգների կանանց համար մինչև վերջերս: Գլխին ձգել է սպիտակ կտորից ծածկոց, եզրները գծազարդ, որ ոտնուած է ճակատին գօտկի մէջ. յետևի կողմից սեր քօղ կախուած: Սպիտակ գծազարդ լաչակի տակից, մազերի վերայ ձգուած է աւելի նուրբ մի կտոր, որ միայն պատճէն առաջնամասից է երեւում: Աչքերն ու ունքերը սև են. աչքերը քիչ չեղակի, որ յատուկ է պարսկական յետագայ մանրանկարչական արտայայտութեան: Գլխի յարդարանքը նման է ներկայ Փամբակի կանանց, մօտ նաեւ վրացի կանանց: Ձախ ձեռքի բթամատի վերայ երևում է օղակ՝ մատանի:

Այսպիսով ձեռքի տակ ունինք պատմական – ազգագրական արժէքով մի պատկեր, որ պատճառ է տալիս նախամոնղոլական շրջանի ազնուական դասի հագուստի մասին: Ժ. դարու քանդակագործական, մանրանկարչական եւ որմանկարչական պատկերագրութեան մէջ բաւարար չափով նիւթեր կան, որով կարելի է ժամանակակից այլ և այլ դասերի և շրջանների հագուստի պէսպիսութիւնները պարզել:

Բ.

Սոյն աւետարանի յիշատակարանից տեսանք, որ Բռնաւորը յիշում է որպէս իրեն «անուանաւոր» «զբարեպաշտ իշխանաց իշխանն պատրոն Դաւիթ Շոթոռականց և զորդիսն իւր զքաջ և զանուանի պատրոնաց պատրոն Գրիգոր և զորդիսն իւր զՍմբատ և զԱրջուկն և զԱրզուխաթուն»: Իսկ Ոծկոնից արձանագրութեան մէջ նոյն Գրիգորին անուանում է «աստուածասէր պարոն իմ» որի ազգումութեամբ կատարել է իւր նուիրաբերութիւնը. կասկածի ոչ մի ստուէր չունինք այս նոյնացման դէմ, թէպէտ արձանագրութեան մէջ չի ասուած, որ այս Գրիգորը Դաւթի որդին է. երկուսն էլ Ոծկոնից վանքի անմիջական տէրերն են, երկուսն էլ Բռնաւորի «պատրոն»ն ու «պարոն»ը:

Այս արտայայտութիւնները հասկանալու համար պէտք է տեղեակ լինել Զաքարեանց շրջանի պետական կազմակերպութեան. երկրի ընդհանուր տէրերը կամ կենտրոնի իշխանները Զաքարէ եւ Իւանէ եղբայրներն էին իրենց ներուն. նրանց ենթարկուում էին մի շարք իշխաններ, որ ըստ զինուորական կազմակերպութեան նրանց սպարապետները կամ զօրավարներն էին և ըստ վարչականի նրանց ստորադրեալները(1): Սրանք էլ իրենց հերթին ունէին աւելի ստորադաս սպարապետներ և կալուածատէր իշխաններ, որոնք «պատ» էին կոչւում: Շոթոռականց իշխանները Զաքարիա մեծի զօրավարներն էին, ինչպէս կ'տեսանենք քիչ յետոյ մէջ բերելիք արձանագրութիւններից, իսկ Բռնաւորը Շոթոռականց տան ազատներից, ուստի և իւր պատրոնի կամ պարոնի «ազգումութեամբ» է, որ կալուածական նուիրաբերութիւն է անում Ոծկոնից վանքին: Այս ոճը կամ արտայայտութիւնը «պարոնին» ենթարկուած ազնուականների կամ «պատ»ների նուիրատուութեան ժամանակ, սովորական է Զաքարեանց շրջանի արձանագրութիւնների մէջ, որից միայն մի երկու օրինակ կ'բերենք իրրև ապացոյց: Թանատի վանքի արձանագրութիւնների մէջ Սիմէոն «պարոնայն ազգումութ էաչս Մամախաթունին» իւր հայրենի այգին տալիս է Ս. Աստիփանոսին. Ծուխքու բէկը Պռոշեաններից ազատներից՝ «պարոնայն ազգումութ էաչս Մամախաթունին գԱզալտեղին հողն» է տալիս նոյն վանքին(2):

Տարաբաղդաբար մեր ձեռքը հասած ազբիւրները քիչ են, եղածն էլ միայն

(1) Տես մեր «Հայրակիանք» եւն. եր. 16-22. 70-75:

(2) Անդ. 187: